Ուսուցման կառավարման լավագույն համակարգերը (LMS)

Ուսուցման կառավարման համակարգերը կամ LMS-երը, ծրագրային հարթակներ են, որոնք նախատեսված են ուսուցման գործընթացը կառավարելու, վերահսկելու և ռեսուրսները բաշխելու համար: Դրանք հաճախ օգտագործվում են առցանց դասընթացներ մատուցելու, սովորողների ուսումնական առաջընթացին հետևելու, ինչպես նաև ոչ ֆորմալ, լրացուցիչ կրթություն իրականացնելու համար:

Այսօր առկա են LMS-ների ընտրության հարյուրավոր տարբերակներ: Յուրաքանչյուրն ունի իր ուժեղ և թույլ կողմերը: Forbes Advisor-ը վերլուծել է ինչպես կրթության մեջ, այնպես էլ փոքր և միջին բիզնես տիրույթի համար նախատեսված LMS լավագույն տարբերակները.

Ուսուցման կառավարման լավագույն համակարգերը (Forbes Advisor, 2023թ)

CYPHER Learning	Լավագույնը՝ կիրառության տեսանկյունից
talentlms	Լավագույնը փոքր բիզնեսի համար
absorb	Լավագույնը ձեռնարկատիրական բիզնեսի համար
ispring	Լավագույնը արագ աջակցման համար
docebo	Լավագույնը կորպորացիաների համար

D2L BRIGHTSPACE	Լավագույնը բարձրագույն կրթության կազմակերպման համար
Blackboard LEARN™	Լավագույնը բարձրագույն կրթության կազմակերպման համար
CANVAS LMS	Լավագույնը հանրային կրթության համարա
moodle	Լավագույնը բաց-հասանելիությամբ ռեսուրսների համար
edmodo	Լավագույնը անվճար և բաց հասանելիության համար

Ինչպե՞ս կողմնորոշվել ուսուցման կառավարման համակարգերի ընտրության գործընթացում.

Ուսուցման կառավարման համակարգ (LMS) ընտրելիս կարևոր է հաշվի առնել ինչպես ուսուցանողի, այնպես էլ սովորողների կարիքները:

Լավագույն LMS-երի ընտրության գործընթացում հաշվի են առնվում բազմաթիվ գործոններ: Դրանք ներառում են հեշտ կիրառությունը, գործիքակազմի առանձնահատկությունները, հաճախորդների աջակցությունը, գնագոյացումը, մասշտաբայնությունը և այլն.

Հեշտ կիրառություն. LMS-ի լավագույն հարթակները օգտագործման համար հեշտ են և պահանջում են քիչ ուսուցում: Վերջիններիս կիրառության համար պետք է լինեն ինտուիտիվ և օգտագործողի համար հարմար:

Կարգաբերումները. LMS-ի լավագույն հարթակներն առաջարկում են հզոր գործիքակազմ, որոնք անհրաժեշտ են ինչպես կրթական, այնպես էլ կորպորատիվ կարիքների համար:

Աջակցություն օգտատերերին. LMS-ի լավագույն հարթակներն առաջարկում են օգտատերերի աջակցություն գերազանց մոտեցումներ և լուծումներ:

Գնագոյացում. LMS-ի լավագույն հարթակները մատչելի են և առաջարկում են գնագոյացման մի շարք բյուդջետային տարբերակներ:

Մասշտաբայնություն և ճկունություն. Լավագույն LMS հարթակները մասշտաբային են, այնպես որ վերջիններս կարող են ադապտացվել տեղակայվող ուսումնական ծրագիրին համապատասխան: